ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիսի 2024 թվական **N 04-Լ**

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-ին հոդվածի 4-րդ մասով և 26.2-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ***որոշում է***.

1.Սահմանել բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի լրացման և ներկայացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Սահմանել բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի լրացման և ներկայացման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը գործում է մինչև «Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության հարցաթերթիկի» և «Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի» թվային գործիքի կիրարկումը և դրա լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին որոշման ընդունումը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ք.Երևան

Հավելված 1

Հավելված 2